Բիզնեսի թափոնների պահանջներ

Կալիֆոռնիա աշխատում է պաշտպանել միջավայրը կրճատելով մեթանի արձակումները եւ պահելով ավելի ռեսուրսներ աղբավայրերից մի շարք նոր քաղաքականություններով: Բիզնեսի կողմից կատարումը կարեւոր բանալի է այս նպատակների իրագործման, եւ Բրբանք քաղաքն այստեղ է, որ օգնի հասկանալ այս նոր պահանջները:

Բրբանք քաղաքի թափոնների կրճատման հրամանագիր[1]

Բրբանքի թափոնների կրճատման հրամանագիրը կրճատում է մի անգամվա գործառության պլաստիկները եւ աղբավայրի թափոնները, պահանջելով, որ կերակուրների սպասարկման ծրարումը լինի վերագործածելի, վերամշակելի կամ կոմպոստացվող:

Հիմնական պահանջներ

- **Պոլիստիրենի արգելք.** Պոլիստիրենի (#6 պլաստիկ) ամեն տեսակ ուտելիքի ամանեղենի վաճառքը կամ բաշխումը (ներառյալ ծավալված պոլիստիրեն (փրփուր) եւ կոշտ պոլիստիրեն) արգելված է Բրբանքում:
- **Լրասարք-ըստ-պահանջի (AB 1276).** Մի անգամվա օգտագործման լրասարքեր (ինչպես սպասք, ձողիկներ, անձեռոցիկներ, եւ համեմների ծրարիկներ) միայն կարող են մատուցվել ըստ հաճախորդի պահանջի կամ ինքնասպասարկման «ընտրեք-ձեր-իրերը» կայանի միջոցով: Ավտոմատ ներառում դուրս տարվող պարկերում թույլատրված չէ:
- **Վերագործածելիներ ներսում ուտելու համար (ուժի մեջ 2026 թ. հունվարի 1-ից).** Այն ռեստորանները, որոնք առաջարկում են ներսում ուտելու նստստեղիներ, ներառյալ արագ-պատահական եւ արագ սպասարկման ռեստորաններ, պետք է մատուցեն բոլոր ուտելիքներն ու ըմպելիքներն օգտագործելով դիմացող, վերագործածելի ափսեներ, բաժակներ, ամաններ եւ սպասք, որ կարելի է լվանալ եւ նորից օգտագործել
- **Վերամշակելի/ Կոմպոստացվող տանելու համար (ուժի մեջ 2026 թ. հունվարի 1-ից).** Եզակի օգտագործման համար իրերը, որոնք մատակարարվել են տանելու կամ առաքելու համար պետք է վերամշակելի կամ կոմպոստացվելի լինեն:

[1]Բրբանքի քաղաքային օրենսգրքի (“BMC”) խորագիր 4, գլուխ 2, հոդված 4

Բրբանք քաղաքի օրենքի հետեւող արտադրանքների ցուցակ

Այս ցուցակը օգտակար կերպով ուղղորդում է, թե որ արտադրանքները հետեւում են Թափոնների կրճատման հրամանագրի պահանջներին եւ խթանում է հետեւողականություն տեղական ուտելիքների ծառայությունների գործողություններում: burbankca.gov/documents/d/public-works/city-of-burbank-compliant-product-list

Բիզնեսի աջակցություն Վերագործածելիների զեղչի ծրագիր

Օգնելու համար բիզնեսներին, որ կատարեն 2026 թ. հունվարի 1-ի պահանջը՝ վերագործածելի ամանեղենով ճաշ մատուցել տեղում ուտող հաճախորդներին, Բրբանք քաղաքը, գործընկերությամբ Կայուն Բրբանք հանձնաժողովի, առաջարկում է Թափոնների կրճատման–Վերագործածելիների զեղչի ծրագիր:

Ակնարկ ծրագրին.

Իրավունակ բիզնեսներ. Տեղական բիզնեսներ, որոնք արտոնագրված են Բրբանքում, լավ վիճակում գտնվող, եւ որոնք կատարում են SB 1383:

Իրավունակ գնումներ. Դիմացող վերագործածելի պնակներ, բաժակներ, սկուտեղներ, ամաններ, սպասք, եւայլն:

Գումարի հատկացում. Մինչեւ $500 յուրաքանչյուր բիզնեսին՝ առաջին եկող, առաջին սպասարկվողի հիմամբ:

Գնման ժամանակաշրջան. Միայն որակավորված են այն գնումները, որոնվ կատարվել են 2024 թ մարտի 1-ի եւ դիմումի տարեթվի միջեւ

Ծրագրի սահմանափակումներ. Այս ծրագիրը կարող է փոփոխվել կամ ավարտել առանց ծանուցման, երբ որ գումարները ծախսված լինեն: Դիմումները այժմ ընդունվուն են եւ այնուհետեւ վերանայումները կսկսեն 2026 թ. մարտի 2-ին

Լրացուցիչ տեղեկությունների համար Թափոնների կրճատման հրամանագրի մասին կամ վերագործածելիների զեղչին դիմելու համար.
burbankca.gov/web/public-works/waste-reduction-ordinance

Այժմ պահանջվում է. Հանրության նայող վերամշակման եւ օրգանական նյութերի աղբարկղ

Աղբավայրի թափոնների ու աղտոտման կրճատման օգնելու համար, Կալիֆոռնիայի օրենքը (SB 1383 and AB 827) պահանջում է բազմաթիւ բիզնեսներից —հատկապես նրանք, որոնք սպասարկում են ուտելիքներ տեղում—մատակարարել հստակորեն պիտակված վերամշակման եւ օրգանական նյութերի աղբարկղներ, հոն ուր հաճախորդները մուտք ունեն աղբի:

Անջատ կոնտեյներներ եւ պիտակավորում

Ճիշտ պիտակավորվուած վերամշակման եւ օրգանական նյութերի աղբարկղների հայթայթումը ոչ միայն գործադրում է նահանգային օրենքն, այլ նաեւ բարելավում է ծառայության արդյունավետությունը եւ աջակցում է Բրբանքի թափոնների կրճատման նպատակներին:

Վերամշակման աղբարկղներ. Բոլոր հաճախորդների եւ աշխատողների մատչելի աղբի (սեւ/մոխրագույն) կոնտեյներները պետք է զուգադրվեն վերամշակման (կապույտ) կոնտեյներների հետ: *Զուգարանները բացառվում են այս պահանջից:

Օրգանական նյութերի աղբարկղներ. Կանաչ օրգանական նյութերի աղբարկղ պետք է մատուցվի եւ զուգադրվի աղբի եւ վերամշակման կոնտեյներների հետ որեւէ տարածքու, որտեղ ուտելիք պատրաստվում, սպասարկվում կամ ուտվում է, ներառյալ հանգստի սենյակները: Եթե աշխատակազմն ուղարկում է ուտելիքի բոլոր մնացորդները հետնամասում գտնվող օրգանական նյութերի աղբարկղի, հանրության նայող օրգանական նյութերի աղբարկղ չի պահանջվում:

Գույն եւ պիտակավորում. Բոլոր աղբարկղները պետք է հետեւեն նահանգային գույների չափորոշիչներին—սեւ կամ մոխրագույն՝ աղբի համար, կապույտ՝ վերամշակման համար եւ կանաչ՝ օրգանական նյութերի համար—եւ պետք է ներառեն նաեւ պարզ, տեսանելի պիտակներ, որոնք ցույց են տալիս որ նյութերը գնում են յուրաքանչյուր կոնտեյներում:

Լավագույն պրակտիկաներ աղտոտման կրճատման համար

- Տեղադրել պարզ, պատկերների վրա հհմնված նշաններ, ցույց տալով ինչ գնում է յուրաքանչյուր աղբարկղի մեջ:
- Պահպանել աղբարկղները միասին, որպեսզի տեսակավորումը ինտուիտիվ լինի:
- Օգտագործել հետեւողական գույներ եւ պիտակներ բիզնեսում:
- Մարզել աշխատակազմը որ մոնիտորինգ կատարի կայանների եւ հեռացնի տեսանելի աղտոտումը:
- Պահել կոնտեյներները մաքուր, մատչելի եւ լաւ պահպանված:

Բրբանքի թույլատրած թափոնների փոխադրողներ

Խորհրդակցեք թափոնների փոխադրողի հետ, որպեսզի ձեր բիզնեսը օրենքի համապատասխան լինի: Նրանք կարող են օգնել **ճիշտ չափսեր** տալու ձեր հավաքման, որպեսզի ծառայության մակարդակը համապատասխան լինի հեռացման կարիքներին: Նրանք կարող են նաեւ հայթայթել վերամշակման եւ օրգանական նյութերի տեսակավորման տեղեկատվություն աշխատողների եւ հաճախորդների համար:

Գտեք փոխադրող հետեւյալ կայքում՝
https://www.burbankca.gov/documents/d/public-works/ab1826-permitted-hauler-list

ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Լրացուցիչ տեղեկությունների համար հեռացման տեղեկությունների եւ առեւտրային բիզնեսների ուղղված խորհուրդների մասին.
ԿԱՅՔ՝ burbankca.gov/web/public-works/business-recycling
ԿՈՆՏԱԿՏ՝ zerowaste@burbankca.gov